ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի կատարումն 25.03.2025թ. հ. 54-2025թ. գրության՝ Անդրանիկի փողոցի հ.101 շենքի տանիքի վերաբերյալ բարձրացված հարցադրումների կապակցությամբ տեղեկացվում է.

Բազմաբնակարան շենքի տանիքը հանդիսանում է շենքի շինությունների ընդհանուր բաժնային սեփականություն, որի պահպանումն ու շահագործումն իրականացվում է շենքի կառավարման մարմնի կողմից, ուստի խնդրի կարգավորումը շենքի կառավարման մարմնի լիազորությունն է:

Քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության 2025 թվականի ծրագրերով բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում նախատեսված չէ:

Համաձայն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված տեղեկատվության, խնդրի լուծման նպատակով գրություն է ներկայացվել նշված շենքը սպասարկող «Սեբաստիա-2» համատիրություն՝ առաջարկելով կատարել ուսումնասիրություններ և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ